


99
891.542-3

h-7H

10293



2011

891.542-3

h-374

Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ms

ՀԱՄԲԵՐԱՆՔԻ
Չ Ի Բ Ո Ի Խ Ը

„ Հ Ե Ր Մ Ե Ս “

~~09~~ 157 258 1171 5/239
~~268~~ 57 111 78



891542-3 4
Ի- 74

ԱՎ. ԻՍՍՀԱԿՅԱՆ

85

ՀԱՄԲԵՐԱՆՔԻ Չ Ի Բ Ո Ի Խ Ը

1. „ՀԱՄԲԵՐԱՆՔԻ ՉԻՐՈՒԽԸ“, 2. ՈՒՇԻՆԱՐԱ,
3. ՅԵՂՆԻԿԸ, 4. ԻՆՉՈՒՄՆ Ե ՍՓՈՎԱՆՔԸ,
5. ՏԱԹԻՉ ՍՈՒԼԹԱՆ ՍԵՂՍԵՒ:



3489

ՏՄԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 2161բ.
ՏԻՐԱԺ 1200,

755-57

2003

Յերկաթուղին վոլորվում եր Շիրակի ծաղ-
կած դաշտերում: Վագոնի լուսամտից նայում
էյի այնքան սիրելի հողի կտորին, ուր խաղաց
ու անցավ իմ բախտավոր մանկությունը:

Ահա և Ոհան-ամու ջաղացը: Այստեղ եր
մի ժամանակ չխչիկում Ոհան-ամու ջաղացը:
Առուն չորացել է հիմա, ջաղացը ավերվել է
վաղուց, միայն յերեք ուռի և մի բարդի է մը-
նացել այն փոքր ծառուտից, վոր սնկել եր
Ոհան-ամին ջաղացի շուրջը:

Ինչքան անգամ ենք նստել այս ծառերի
տակ Ոհան-ամու հետ և զրույց արել:

Այն որվանից շատ բան է կուլ գնացել ժա-
մանակի անհունության մեջ՝ անկրկնելի և ան-
վերադարձ.— և Ոհան ամին ել չկա, վաղուց
մեռել է նա և թաղված է այս ծառերի տակ
իր սրտի ուղածի համաձայն:

Յե՛վ հիշում եմ քո իմաստուն խոսքը, Ո-
հան ամի.

«Մարդը կերթա, աշխարհը կըմնա»:

Մեր ջաղացից կես ժամի հեռավորության վրա յեր գտնվում Ոհան ամու փոքրիկ ջաղացը՝ մի աղորիքով: Իր ձեռքով եր շինել ջաղացը Ոհան ամին և իր ձեռքով ել մշակում եր պատիկ բոստանը, վոր փոված եր ջաղացի առջև:

Յերբ մեր ջաղացն եյի լինում՝ հաճախ այցի եյի գնում Ոհան ամուն: Թեյ ու շաքար եյի նվեր տանում նրան, վոր միասին թեյ խմեյինք և լսեյի նրա զրույցները:

Շատ վաղուց ե այդ: Շատ տարիներ առաջ այն պարզասիրտ և միամիտ ժամանակները, յերբ Ոհան-ամու ծերունի ընկերները, գյուղից գյուղ, ցուպերը շավիղների քարերին ձեծկելով՝ քթերի տակ մի հին բան թոնթնալով, կորամեջք ու տնկտնկալով գալիս եյին ջաղացը հատկապես Ոհան-ամու ընտիր թյուրթյունից մի չիբուխ քաշելու և հնությունից մի-յերկու խոսք իբար հետ սրտանց խոսելու համար, և նորից տնկտնկալով վերադառնում եյին իրենց գյուղերը:

Պատանի յերևակայությանս համար յերեվում եր լուրջ, մենակյաց Ոհան ամին, իբրև

նահապետական դարերի մի իմաստուն, վոր վաթսուն տարիների գազաթից նայում ե աշխարհին, միաք ե անում աշխարհի բանը՝ ծխելով իր «համբերանքի չիբուխը»:

Իմ թարմ գգայության վրա խորհրդավոր տպավորություն եր թողնում նրա անցրած ու ապրած կյանքը և իր ապրումներից գումարած մտքերը:

Մինչև քառասուն տարին Ոհան ամին ապրել եր իրեն պապերի գյուղում, աշխատել եր որ ու գիշեր, ցանել ու հնձել, կողբ ու արանները քիրա-քյարվանի գնացել, ծնողներին խնամել ու պատով թաղել, քույրերին ամուսնացրել, ինքն ել ամուսնացել և վորդիներ հասցրել:

Քառասուն տարեկան հասակում, գյուղում հողաքաժին յեղավ: Հարուստները իրենց մեջ բաժանեցին բերրի հողերը և ստերջ հողերը տվին թույլերին, խեղճերին:

— Ոհանի տղամարդ հոգին զայրացավ: Վառեց ու բորբոքեց հողագուրկների արդար վրեժը: Գյուղի զրկված մասը ըմբոստացավ: Հարձակվեցին, ծեծեցին ուսին ու մի քանի հարուստների:

Գանգատն հասավ քաղաք: Յեկավ կաշառված պրիստավը մի քանի յասաղուլներով, (վոստիկան) հավաքեց ըմբոստներին, բարկա-

ցավ, վոտները գետին զարկեց ու քաշեց նրանց մտրակի տակ:

Արյունը կոխեց Ոհանի աչքը. ձեռքը ձգեց պատահած քարին և նետեց պրիստավի կրծքին: Ծեծվողները թե առան, հարձակվեցին յասպուղները վրա, զինաթափեցին նրանց, քարահալած արին պրիստավին ու վոստիկաններին, և գյուղից քշեցին:

Յերբորդ ուր, յերբ կազակները յեկան նըրանց ձերբակալելու՝ նրանք գյուղից փախել ելին արդեն, յելել ելին սարերը, «ղաչախ» ելին ընկել:

Կարճ ժամանակի ընթացքում փախստական գյուղացիները մեկ-մեկ իջան գյուղը, ընկան հարուստների վոտները, ներում խնդրեցին և ներվեցին:

Ոհանը մնաց չորս ընկերով փախստական: Մի ժամանակ հետո, չորս ընկերն ել յեկան, վզները դրին հարուստների շեմին, ներում ըստացան: Բայց Ոհանը մնաց մենակ և անսասան: Նա չզիջեց: Մերժեց հարուստների պատգամը, վոր ուղարկել ելին նրանք—հանձնվել, զվշալ և թողություն ստանալ:

Մի ուր ել, մատնությամբ, մի գյուղում բռնվեց նա: Չեռները կապեցին հետևը, տարան

Պյուսմբի քաղաքը, դատեցին և չորս տարվա բանտարկություն վճռեցին:

Յերբ Ոհանը բանտից ազատվեց, գյուղն յեկավ, վորդիները հասել ելին արդեն, ուժով-ցել և հարստացել, բայց իրեն մենակ զգաց գյուղում, չուզեց տեմնել իր դավաճան, փոքրոգի ընկերների յերեսն անգամ. չուզեց մնալ գյուղում, վորպեսզի ստիպված չլինի պատահելու իր թշնամի հարուստներին:

Իրենց գյուղից ներքև, Ախուրյանի ափին, իր հանդում Ոհան-ամին ունեք մի փոքրիկ շաղաց՝ նրան կիպ մի տնակ: Վճռեց ու վերջնակա-նապես տեղափոխվեց այնտեղ: Յեվ միայն շատ անհրաժեշտ դեպքերումն եր գյուղ գնում:

Արդեն բանտում յերազել եր այս մեկուսացումը—«աշխարհաթող» լինել—և այդ հաստատորեն վորոշել եր իր մտքում:

Անգոր յեղան կնոջ և վորդիների թախանձանքները բեկանելու փայփայած նրա իղձը:

«Քանի վողջ եմ,—այսպես ասաց ու այսպես կտակեց իր վորդիներին,—եստեղ կաշխատեմ կապրեմ. յերբ մեռա, եստեղ թաղեցեք ինձի՝ իմ ծառներիս տակը»:

Յեվ այսպես «աշխարհաթող» յեղավ Ոհան-ամին:

* * *

Այսորվա պես հիշում եմ իմ այցելած որե-
րից մեկը:

Ամառ եր: Ախուրջանում լողանալուց հետո
գնացի Ոհան-ամու մոտ զրույց անելու:

Ոհան ամին թիկն եր տվել ծառերի տակ:
Մի փոքրիկ արաղճին. մասնակի ծածկում եր
նրա գլխի նոսր, ճերմակ մազերը: Ճակատը
շատ կնճռոտած եր յերևում: Ահադին ձյունա-
փայլ մորուքը խառնվել եր բաց կրծքի ալե-
խառն մազերին: Ինքնամփոփ ծխում եր չիբու-
խը: Վոտների տակ մրափում եր Ասլանը, Ոհան-
ամու հավատարիմ, հսկա գամփուր:

Բարև տվի և թեյ-շաքարը դրի կողքին:
Խորշոփների մեջ կորած խոհուն աչքերով նայեց
ինձ:

— Գալդ բարի, աղաղբորս տղա,— այսպես
եր նա միշտ կոչում ինձ:

Միջորեյի ճպուռները արևաբորբոք ճոռում
եյին. կարծես արևի ձայնն եր այդ, կամ ուղ-
ղակի, արևի ճառագայթներն եյին ճոռում այս-
պես բարկ ու բորբոք:

Ջաղացը ծուլորեն չխշխկում եր: Ջաղացի
դռանը կապած կար մի խղճուկ եր, վոր յեռան-

դով քսում եր մեջքը պատի անկյունին: Հավե-
րը քշուջ եյին անում այս ու այն կողմ:

Ինձ տեսնելով մոտեցավ Ոհան ամու պա-
ռավը, վոր յեկել եր ամուսնուն այցի:

— Յես՝ չե, թող աղեն ըսե,— դիմեց ինձ,
հայը եսոր քեֆ չունի, կըսե՝ մեջքս կցավի: Ես
չոլում հերիք մնա, ինչի համար: Թող տուն
գա, առոք-փառոք ապրի. ջարդվելիք հարսները
ինչի համար են, թող շահեն: Ես որ ծերու-
թյանը դադար չունի. մեկ գլուխ կդատի ու
կաշխատի: Ինչ պիտի տանի աշխարքեն:

— Կնիկ, հերիք փնթփնթաս. քանի հազար
անգամ ասել եմ քեզի—յես աշխարհաթող յեմ
յեղել. յես ել գեղն յեկողը չեմ: Խոսքս խոսք ե:
Աշխատել: Բանի ձեռքս բերանս կհասնի, պտի
աշխատեմ: Հո հարստության համար չեմ դա-
տում. իմ աչքս կուշտ ե: Տղերքս իրանց հա-
մար, յես ինձ համար: Իմ հացս իմ քրտինքովս
պտի ուտեմ: Յես քեզնից լավ գիտեմ, վոր աշ-
խարքից բան տանող չի յեղել, բայց մենակ
թե՛ մարդս ես աշխարքն յեկել ե աշխատանքի
համար: Ձեռքս՝ բան, վոտքս՝ գերեզման: Պըր-
ծանք:

Դեհ, ես չայ-շաքարն առ, սեղան բաց, չայ-
դանն ել դիր, աղաղբորս տղի հետ հաց ու-
տենք, չայ խմենք:

Յերբ պառավը գնաց, յես հարցրի.

— Ոհան ամի, հիվանդ ես:

— Չէ, ջանըմ, մեջքիս ցավը հո՞ նոր չե, հին քան ե, բանտից եմ հետս բերել: Հիմի հո՞ դպա ջահելությունն չենք երթա. տվողը ինչ վոր տըվել ե, հիմի քիչ-քիչ հետ կառնի: Եղպես ե աշխարքիս բանը: Յես ել կամաց-կամաց ճամբա կիստկեմ դպա հորս քովը:

Ու չիբուխը խրելով գոտիկի ծալքը՝ թեթե շարժուձով վտաքի յելավ:

— Երթանք բոստանը, մեկ քիչ սոխ, թարխուն քաղենք: Եսոր կնիկս ինձի համար գառով փլավ ե բերել, ուտենք իրար հետ:

Մարգերի նեղ արահետով քայլում եր Ոհան-ամին՝ առանց գավազանի. նա տակավին քավազան չեր գործածում: Ասլանը կրընկոխ՝ լեզուն դուրս ձգած՝ հետևում եր նրան:

Յես գնում եյի նրանց հետևից:

Ոհան-ամին կորաքամակ եր արդեն, գլուխը բավական թաղվել եր ուսերի մեջ. հաստ, քայց կարճ վոտները դեռ տոկուն եյին ու ամուր:

Ասլանը՝ կապտավուն մազերով աժղահագամփուր, իր տոհմի յերբորդն եր, վոր ապրում եր այստեղ: Նրա յեղբայրներն ու քույրերը ապրում եյին գյուղում, Ոհան-ամու տանը:

Այս Ասլանից առաջ յերկու Ասլան ապրել եյին այստեղ՝ իրար հաջորդելով և նրանց թաղել եր Ոհան ամին բոստանի ծայրում ու վրանները քար ձգել:

Ոհան-ամին թարմ կակիծով մեկ-մեկ հիշատակում եր նախորդ Ասլանների բարեմասնությունները, նրանց հետ կապված դեպքերը՝ նրանց անձնագոհ քաջությունները:

Ասլանը Ոհան ամուց մի վայրկյան չեր բաժանվում. յերբ իրար չեյին տեսնում՝ անհանգիստ ու շղայնացած վորոնում եյին իրար: Իրար հետ սեղան եյին նստում. Ոհան-ամին ուտում եր իր ճաշը, Ասլանը՝ իր լափը:

Չմբան յերեկոները, Ոհան-ամին բուխարիկի կողքին նստած՝ լուռ, իր չիբուխն եր ծխում, Ասլանը նրա վոտների տակ, գլուխը թաթերի վրա դրած, լուռ, չիբուխի ծուխի պարույկներին եր հետևում:

Յերբ մեկը Ասլանի մոտ «Ոհան-ամի» արտասաներ, նա աչքերը կբանար լայնորեն, ականջները կսրեր, պոչը կշարժեր: Ոհան-ամու անունը թինդ եր հանում Ասլանի հոգին:

Վայ թե մեկը Ոհան ամու բացակայության ժամանակ ձեռք դիպցներ նրա վորևե իրին՝ Ասլանի գայրույթին չափ չեր լինում, կհաչեր ու կգազազեր մինչև տերը գար. սակայն ինքը

սիրում եր խաղալ Ոհան-ամու իրերի հետ: Հա-
ճախ այսպիսի հանաքներ եր անում: Թագցնում
եր Ոհան-ամու թյությունի քսակը կամ թաշկի-
նակը, և սուտ-քուն մտած, ներքին հրճվանքով
նայում եր՝ թե ինչպես իր տերը քրքրում ե
ամեն մի անկյուն կորցրածը գտնելու, և հետո,
ինքը քնած տեղից յելնում եր, վորոնում, գրա-
նում իրը և ուրախ-ուրախ բերում հանձնում
Ոհան-ամուն:

Մի որ, յեղբորս յերեխաները Ասլանին
բռնել էին դաշտում, ուժով տարել էին մեր
տուն, փակել մի սենյակում, առատ միս դրել
առաջը, վորպեսզի այս կերպով սովորեցնեյին
մեր տան վրա: Բայց յերկու որ Ասլանը գրեթե
վոչինչ չեր կերել, անընդհատ վոռնացել եր՝
մինչև վոր մայրս արձակել եր նրան:

Յեվ Ասլանը իսկույն, խելակորույս, սլացել
եր Ոհան-ամու մոտ:

Յերբ յես մի որ Ոհան-ամուն պատմեցի
Ասլանի կրած տանջանքը մեր տանը, նա հան-
գիստ սրտով ասաց.

— Թագավորի պալատն ել տանես ու ա-
մեն որ հավ ու լոր տաս, ելի պտի պրծնի, գա:
Յեվ ավելացրեց.

— Ես շուն ե. հալա մեկ ասա՛ շունն: Ես՝
մարդ արարած չե. ես՝ կնիկ արմատ չե: Ես՝

շուն ե— հավատարմություն: Մարդու բնույթը
իսկի չի կրնա հասկանա շան բնույթը: Մարդը
սուտ ե, հավատարմությունը մարդու համար
անհասկանալի բան ե:

* * *

Նստեցինք ծառերի սովերում: Ասլանը սե-
ղանակից եր մեզ՝ մի փոքր հեռու պըպղած:
Մենք գառի վոսկորները նետում էինք նրան,
և ել ձարպիկորեն այնպես եր զիրքավորում
գլուխը, վոր վոսկորները ուղղակի ընկնում
էին յերախի մեջ և մի ակնթարթում հզոր ա-
տամներով փշրում եր վոսկորները:

Ոհան-ամին մի բաժակ ողի խմեց, մի բա-
ժակ ել ինձ մատուցեց.

— Խմե, աղաղբորս տղա, խմե, վոր ուրա-
խանանք: Ես աշխարքում գլխավոր բանը ուրա-
խասիրտ ընելն ե: Ուրախությունը բախտավո-
րության կեսն ե: Ինչվոր ընելու յե՛ պտի ընի-
ես գլխեն ինչ տալացուք ունենք տխուր ընելու:
Ես սհաթն ե մեր ձեռքը. քանի ես սհաթը մեր
ձեռքն ե՝ ուրախ ըլենք; մեկել սհաթի տերը
մենք չենք, կարելի յե կանք, կարելի յե չկանք:
Ոհան-ամին բաժակը կրկնեց:

— Յես չար բան սիրող չեմ, կռիվ ուզող

ել մարդ չեմ. ու վիճակիցս ել շատ գոհ եմ:
Ես ջաղացը, ես կտոր հողը շատ ե ինձի համար:
Աշխարհը վոր բաժնեն, կարելի յե եսքանն ել
ինձի չհասնի: Ե՛նքան մարդիկ կան—անտուն,
անհող, յեանյալ աղքատ...

— Ե՛յ գիտի Միրզա Մեհդի, ականջդ կան-
չե՛ թեվոր վողջ ես. թե ես ե՛ պառկել ես հողի
տակ, աղերքդ վողջ ընեն: Եսպես մեկ տաղ
կերգեր բանտի մեջ, յերկու տարի միալար:
Եդ տաղի խոսքերը մտքիս մեջ տպվել են: Քը-
սան տարի յե ամեն որ կըսեմ ինձ ու ինձ:

Կանանչ դաշտի պարզ հողիկը
Շահի վոսկե քյոշքից լավ ե:
Քրտինքովդ կերած հացը
Սուլթանների ճաշից լավ ե:

Շահիրների մուղամներից
Քամու ազատ շունչը լավ ե:
Հարուստ, հպարտ աղբորիցդ
Սրտամոտ ոտա՛րը լավ ե:

— Լավ խոսքեր են,—ասացի յես,—բայց ո՞վ
եք եդ Միրզա Մեհդին:

— Են աճամ եր: Իմ տարիքիս մարդ եր:
Կեղծ փող եյին գտել քովը, բերել կոխել եյին
բանտը: Յերկու տարի իրար հետ շատ սիրով

ապրանք, կողք-կողքի, մեկ ամանից եյինք ու-
տում: Իմ ու քու շունեյինք: Չիտեմ՝ մեղավոր
եր թե փորձանքի մեջ ընկած.—բանտում բռն-
ված մեկը չկա, վոր իրան մեղավոր հաշվե. ա-
մեն մարդ իրան արգար, անմեղ ե հաշվում.—
բայց ազնիվ, պատվական մարդ եր, իմաստուն
մարդ եր, խելքի ծով. շատ յերևելի խոսքեր ու-
ներ:

Կընստեր թախթի վրա, չիբուխը կքաշեր
միալար ու կըսեր—քաշենք համբերանքի չի-
բուխը մինչև ազատության դուռը բացվի»: Յես
ել նրանից սորվեցի եդ խոսքը, յես ել կքաշեմ
հիմի համբերանքի չիբուխը՝ մինչև...

— Կնիկ, մեկ հատ ել լից,—ընդհատելով
իր խոսքը՝ Ոհան ամին գիմեց կնոջը, և լիքը
բաժակը վերցնելով, կործես, մի վայրկյան մեղ-
նից անջատվելով՝ հայացքը հռոեց հեռուն:

— Կենացդ, Միրզա Մեհդի, աղբեր ջան,—
ասաց և բերանը սրբելով դարձավ ինձ.

— Հա, են կուղեյի ասել՝ աշխարհք են
զլխից համբերանք ե յեղել ու կա...

Շատ տեսակի մարդիկ կային բանտը—յեփ-
ված, աշխարհատես: Հայ ասես, թուրք ասես,
ել քուրդ, ըռուս: Վարժապետ կար, վաճառա-
կան, գրել-կարդալ գիտցող մարդիկ: Շատ բան
սորվեցի եդ մարդկանցից: Վաստակածդ փողը

7155-57



քուկը չե, կրնա ուրիշը գողնա տանի, բայց ինչոր սորվեցիր՝ են քուկդ ե:

Մեկ լավ շահել տղա կար՝ անուշը Սարգիս: Հարազատ աղբերը քառսուն ասակ զըրկել եր նրան, վերջն ել հողը ձեռքից ուզեցել եր խի: Սարգիսը կրակ եր բացել վրեն, վիրավոր եր արել, բայց չեք սպանել: Բանտ եյին քցել մեկ տարով: Բանն աջողի, անուշ տղա յեր, գառի պես, պատվով:

Եդ ազահ աղբոր վրա Միրզա-Մեհդինը ասավ:— Ժամանակով աճամի հողը մեկ մարդ կուզա, կիջնի մեկ գեղ ու կխնդրվի իրան դէրկից շինեն, հող տան, ապրի: Գեղի մեծերը կը սեն.— Ես հողը քեզի. կըսե՛ քիչ ե: Կըսեն.— Են մեկն ել քեզի. կըսե՛ նորեն քիչ ե: Են ժամանակ գեղի մեծերը կըսեն.— Ե՛յ դու ծակ-աչք մարդ, անան մեր հանդը առաջդ ե, վազե՛, ինչքան վոտքդ կարեց՝ են քեզի: Ես մարդն ե. Էնքան կվազե, Էնքան կվազե, վոր վերջը շունչը կըկարի, սիրտը կպատուի, կընկնի, կմեռնի... Հիմի քու աղբերն ե. պատիժն առավ, մահը մոտիկուց տեսավ: Եդքանն ել բավական ե:

— Մեկ հատ ել խմենք ու ըսենք՝ հերիք ե: Իմ մերժումիս վրա՝ ինքը խմեց:

— Բանտի մեջ մեկ կտար ընկած վաճառական կար, շատերի փողը կերել եր: Ծիծաղու

քան եր: Ում փողը վոր կերել եր, նըանց շատերից ամեն ու ուտելիք ու խմելիք կստանար: Եդ բանի վրա ինքը կըսեթ թե՛ յես Նոյ նահապետի ուրառապանն եմ: Ըսել ե թե՛ ջրհեղեղի ժամանակ, յերբ վոր տապանը ջրերի վրա յեր, մեկ մարդ լող ե տալիս դպա տապանն ու գոռում:— Նոյ ջան, ճոպանը քցե, տապանդ յելնեմ: Միտքդ չե՛, վոր դու յեղ չունեյիր, քեզի մե տիկ յեղ տվի: Նոյ նահապետը չլսելու սովավ ու մտքի մեջ ըսավ.— Ազատեմ, յետև պաի կանգնի, յեղը պահանջե: Թող ջրի տակն անցնի: Մեկ ուրիշ մարդ մոտեցավ թե՛ Նոյ, ազատե ինձի, դու լավ մարդ ես: Են տարին ալուր չունեյի, մեկ ջվալ ալուր փոխ տվիր...

Նոյ նահապետը տղոցը թե՛ ազատեցեք, խեղճ ե: Ու մտքի մեջ ըսավ.— վոր խեղդվի, ալուրս պաի կորի: ազատեմ, կելնի, կաշխատի պարտքը կուտա:

Հիմի ել ես իմ պարտատերերն են:

Ոհան-ամին չիբուխը լցրեց և մի կում ծուխ առնելով ու արձակելով, շարունակեց.

— Եսպես, բանտ ըսածդ մեկ հավաք աշխարք ե: Մենակ են զանազանությունը կա, վոր աշխարհքում չընկած գողերն ու արունքտերերն են ապրում, իսկ բանտի մեջ ընկած գողերն ու արունքտերերը:

Բանտի մեջ հասկացա բանի ուղն ու ծուծը. են թե՛ ամեն, ամեն գեշ բաների պատճառը իմ ու քունն է: Գեղ ու քաղաք իրար զգում են փողի, հարստության համար, ուրիշի աշխատանքը տանելու համար:

Ու քանի վոր փողը կա, մարդ չկա, քանի իմ ու քու կա, սեր ու խիղճ չկա: Եդտեղից եր հարուստ ու աղքատ, զրկող ու զրկվող, բանտարունհեղություն:

Թուրքը կրսե. — «Կռիվն ուրտեղից եւ — Մեկը կուտե, մեկելը կաշե. — կռիվն եդտեղից ես»: Յես իմ մասիս. — հաշիվս իստկել եմ աշխարքի հետ: Ուրիշ ինչ կրնայի անել: Կովեցի, բանտ գրին, մենակ մնացի: Հիմի՛ իմ ձեռքս առանց ուրիշի բերնից հաց փախցնելու՝ իմ բերնիս հացը կվաստկե, և ել արգար հացս միշտ կխսեը եմ ուրիշի հետ, ծանոթ-անծանոթի հետ:

Ուրախ աղմուկով, թևերը թափ տալով յեկավ խելառ Մխոն:

— Մխո ջան, — ասաց Ոհան-ամին, — նոտի հաց կեր:

— Մխոն ենքան ուրախասիրտ ե, — դարձավ Ոհան-ամին ինձ, — գիտես թե՛ վոչ պառվալ կա վոչ մեռնել: Աշխարքը իրան վրա ծախես, մեկ կոպեքի չի առնի: Ամենեն հարուստ մարդն է,

ինչու վոր ամենեն գոն ու կուշտ մարդն է: Ամեն բանի հաղթել է:

Մխոն Ոհան-ամու քրոջ վորդին եր՝ մանուկ հասակից վորբացած: Մեծացել եր քեռու տանը, իբրև նրա վորդիններից մեկը: Մոտ յեքեսուն տարեկան կլինեը, նեղ ճակատով, մեծ քթով, և բարձրահասակ:

«Խելառչունչի մեկն է», գյուղացիները այսպես եյին բնորոշել նրան: Խելառ-խելոք: Խոսում եր անկապ, տակից-վրայից, սարից-ձորից: Սակայն մշտական դվարթ տրամադրության մեջ եր այդ մարդը: Թվում եր թե՛ յեքեք տխրություն զգացած չեր կարող լինել նա: Աշխարհի չար իրերը նրան բարի դեմքով եյին յերևում: Ամեն բան ծիծաղի առիթ եր նրա համար — մահն ել, մահի բոլոր տարբերն ել — ցավ, հիվանդություն, ծերություն:

Մխոն ապրում եր Ոհան-ամու հետ, թեև նրա մի վոտը ջաղացումն եր, մյուս վոտը գյուղում: Միասին վարում եյին իրենց փոքր տնտեսությունը՝ բաղկացած մի-յերկու տասնյակ հավերից ու բազերից և մի կթան կովից: Միասին կռանում եյին ջաղացաքարը և սարքի ջրում:

Մխոն անչափ նվիրված եր Ոհան-քեռուն,

նրա խոսքին՝ հլու հնազանդ: Յեվ միայն Ոհանքեռու հարցերին եր լուրջ պատասխանում:

Մխոն գգակ չեք դնում, գարուն-ձմեռ-Մազերը թաղիքի պես կպել եյին գլխի մաշկին: Միայն սաստիկ ցրտերին բաշլուխ եր փաթաթում գլխին:

Յերբ գտակ եյին տալիս՝ նա մի կողմ եք նետում ասելով, — «Իմ փափախս գտեք, ավերք դնեմ. ուրիշը չեմ ուզե: Իմ փափախս վեցը հատ աբասի արժեք»:

Գյուղի յերիտասարդները, յուրաքանչյուր անգամ նրան տեսնելիս՝ հարցնում եյին.

— Մխո ջան, փափախդ ո՞ւր ե:

Յեվ Մխոն ամեն անգամ, որեկան հարյուր անգամ իսկ, միևնույն պատասխանն եր տալիս.

— Ի՞նչը:

— Փափախդ ո՞ւր ե:

— Ո՞ւմ:

— Բու փափախդ ո՞ւր ե:

— Փափախս, հա: Բամին տարավ փափախըս: Չիտեմ, խորեռի տարին եր թե քեռու ձիու կորած տարին, մեկ սատանի քամի յելավ, աշխարք առավ մեջ, ջաղցի քարի պես պտրտցուց, ֆոռացրեց: Յես մե մենձ քարի տակ մըտա, քարը բռնի, տափ յեղա: Մենակ փափախս տարավ, են տանելն եր վոր տարավ: Հիմի վո՞վ

գիտե, փափախս վոր սարի գլխուն ե դրել, վոր ծովերու վրեն կըտմբտմբա:

Ի՞նչ փափախ, ի՞նչ փափախ, վեցը հատ աբասի արժեք:

Մխոն սեղանի ափին ծունկի յեկած՝ ձեռքն ընկածը խոթում եր բերանը և խնդումներես նայում Ոհան-ամուն:

— Մխո, գե՞ղն եյիր, — հարցրեց Ոհան-ամին:

— Վո՞վ:

— Դու գե՞ղն եյիր:

— Չե, քեռի ջան, գնացել ճամբու վրեն կայնել եյի եկող-երթացողի հետ մե. քիչ խորաթա ենելու:

— Իեռի ջան, — բարձր ծիծաղով ավելացրեց, — ըսին թե՛ Հոռոմցի Բաթո աղեն մեռել ե, հա, հա, հա, մեռել ե:

Յեվ ծիծաղից դողում եր վողջ մարմնով:

Ոհան-ամին աչքերը մի պահ գոցեց, ձախ ձեռքով տրորեց ճակատը, և ապա աչքերը վրաս հառելով՝ ասաց.

— Գողդ. գոփողի մեկն եր, աղքատի շապիկը վրայից հանող: Տեղովը վոր արե-արեգակ ըններ եդ Բաթո աղեն, ելի մեկ մարդու չեք կըբնա տաքացնե:

Ողորմի՛ կողքի մեռելներին...

Յեվ մի յերկու ումպ թեյից հետո՝ շարու-

նակեց—լավ կրճան չնայի: Ինչքան վոր ազահ եր, ենքան ել կծծի յեր: Աշխարքը իրան տայիր՝ աչքը ելի մըջունի տարած մեկ գարի հատիկի վրա կըլներ: Ազահ մարդու փորը կընա կուշտ ըլնի, բայց աչքը միշտ անոթի կըլնի:

Ես մարդը բան ել չեր ուտում, միալար կդիզեր ու կդիզեր: Տղա գավակ ել չուներ. դիզածը մնաց փեսաներին: Եդպես ե աշխարքիս բանը՝ կծծի մարդու վիզը վոջիւր կուտե, փողը՝ ուրիշը:

— Մարդը գնացական ե,—ամփոփեց իր մտքերը Ոհան-ամին,—նրա լավ գործը՝ մնացական. ըսել ե՝ ինքն ե մնացական: Ա՛յ, խոսքի որինակ, ես շաքարը, քցեցիր չայի մեջ՝ հալավ, կորավ, չկա. բայց չայն անուշցավ: Ենպես ել լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարքը կանուշցնե: Թե չե առանց լավ մարդու աշխարքը շատ դառն ե՝ ոճի լեղի...

— Վնվ,—հարցրեց Մխոն:

— Բաթո աղի վրա յե խոսքս, Մխո ջան:

— Վոր մեկ բրդուճ հաց տար ուրիշին, ինչը կծուկեր,—ասաց Մխոն քրքջալով:

— Ղուրբան եմ յեղել եդ ճակատիդ, Մխո ջան,—խրախուսեց Ոհան-քեռին մի մեծ կտոր շաքար Մխոյին տալով, վորը դռթ-դռթ աղմուկով մանրեց ատամների տակ:

Բայլ առ քայլ յերեկոյանում եր: Լեռները ծփում եյին մանուշակի գույների մեջ. արևածաղիկները վոսկե գլուխները կախում եյին: Դաշտերից ու արտերից դանդաղ-դանդաղ տուն եյին դառնում շինականները:

Յես վեր կացա գնալու: Ոհան-ամին ուղեկցեց ինձ մինչև բոստանի ծայրը՝ ճանապարհին մի քանի մատղաշ վարունգներ քաղելով ինձ համար:

Բոստանի ծայրին կանգնեցինք: Ոհան-ամին ծանրությամբ նայեց շուրջը—դաշտերին ու գետի փայլիլուն վոլորներին, դաշտերի մեջ ձըգ-վող շավիղներին, նայեց հեռավոր լեռներին, վորոնց նայել ե տասնյակ տարիների ընթացքում, և մայր մտնող արևին նայեց, ու չիբուխը վառելով ներս տարավ մի ումպ ծուխ, և ապա ծուխ ու հողոց իրար խառնելով ասաց.

— Ե՛հ, ծերացանք, ըսել ե՝ յեկանք հասանք ծերին: Ամեն բանի ծերին, կյանքի ծերին, աշխարհի ծերին... Վնաս չունի: Մեկ խնդրանք ունիմ—քանի վողջ եմ, վոտ ու ձեռով մնամ, գետնին գերի չըլնիմ, աշխատեմ, ու եստեղ, ջաղացիս դուռը նստած, համբերանքի չիբուխս քաշեմ, ու ամեն որ լսեմ բարի, ուրախ լուրեք աշխարքիս չորս դիերից, ամեն կողմերից: Ել ուրիշ բան չեմ ուզի...

* * *

Իմ սիրելի Ոհան-ամի!

Շատ և շատ տարիներ են անցել այն որե-
բից, շատ բան է խավարել իմ հիշողութեան
մեջ, սակայն անջնջելի յե մնացել քո նահապե-
տական պատկերը իմ հոգում:

Յե՛վ հիշում եմ միշտ քո անմոռաց զրույց-
ները, և քո համբերանքի չիբուխի խաղաղ ծու-
խը աչքիս առջևն է դեռ, և քո հանգիստ, հնա-
մենի ձայնը ականջումս է տակավին...

Դեկտեմբեր 1928,
Յերևան.

Ո Ի Շ Ի Ն Ա Ր Ա.

(ՆՆԴԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ)

Արդար և իմաստուն դատավոր եր Ուշինա-
րան: Մաքուր եյին նրա բոլոր խորհուրդները և
միայն մերձավորների և հեռավորների համար
նվիրված:

Համեստ կյանք ունեւր նա իր հոյակապ սրահ-
ներում, և ճիս սեղան ու ապաստան ամեն աղ-
քատների և ուխտավորների համար, վոր տարի
բոլոր դեգերում են Գանգեսի սրբազան ափերի
և Հիմալայի նվիրական անտառների միջև:

* * *

Մի անգամ, յերբ նա դահլիճում նստած
կարդում եր Վեդաները,—սրտապատառ ներս
ընկավ մի աղավնի, վորին հետապնդում եր
սրաթև անգղը:

Սարսափած թռչունը նստավ դատավորի
ծնկին և պաշտպանութուն աղերսեց:

Անգղը հասավ նրա հետևից: Սակայն Ուշի-
նարան պատուպարել եր արդեն մահապուրծ ա-
ղավնուն:

* * *

— Դատավոր, — դիմեց անգղը Ուշինարային,
— քաղցը վաղուց ընկճել է ինձ: Մեծ հանցանք է
քաղցածի ձեռից խլել նրա սնունդը: Հեռ տուր
ինձ աղափսին:

Ուշինարան ձեռի շարժումով մերժեց նրա
պահանջը:

— Դատավոր, — շարունակեց անգղը, — դու
պարտաճանաչ մարդու հոչակ ունես, սակայն
ինչո՞ւ պարաքի որենքին հակառակ ես գնում:
Ինչո՞ւ յես ինձ զրկում իմ անհրաժեշտ սնունդից:

— Այս անոգնական, մահի սարսուռով դող-
դոջուն թռչունը իմ պաշտպանությանը դիմեց,
— առարկեց Ուշինարան, — դո՛ւ, հզոր անգղ, մի-
թե չես աեսնում, վոր իմ առաջին պարտքն է
— չհանձնել ինձ ճավատացող արարածին իր հո-
շտուող թշնամուն: Ավելի մեծ վոճիր ե՛ վտանգ-
ված թույլին զրկել ոգնությունից, քան թե կա-
տարել վոճիրների վոճիրը — սպանել Բրահմինին:

— Բայց, դատավոր, ամեն արարած աշ-
խարհում ուտելով է, վոր կապրի: Յեթե զրկես
արարածին կերակուրից, իսկույն կգաղարի նը-
րա կյանքը: Հիմա վոր դու իմ ձեռքից խլում
ես իմ ապրուստը, շուտով կմահանամ յես և ինձ
հետ կինս ու ձագուկներս:

Աղափսուն խնայելով դու մեզ բոլորիս մա-
հի ես մատնում:

— Դո՛ւ շատ իմաստուն ես խոսումս ո՞վ
անգղ, հզոր թռչուն. բայց խոստվանիր, ի՞նչպես
կարող ես ընդունել, վոր թշվառ փախստակա-
նին հանձնել կորստի: Բնավ, յերբեք:

Քո առջև բաց են ահա մառանիս դռները:
Գնա՛, առ, ինչ վոր ուզում ես — յեղնիկի միս,
վարազի միս: Յե՛վ ուրիշ ինչ վոր ուզում ես,
ասա՛, կրկատարեմ քո կամքը:

— Վո՛չ, դատավոր, յես ուրիշ տեսակի միս
ուտելու սովորույթ չունիմ:

Բնությունից վորոշված հավերժական ու-
րենք է, վոր անգղները աղափսիներ պիտի ու-
տեն: Տո՛ւր ինձ իմ իրավունքը:

— Ա՛նգղ, — թախանձեց Ուշինարան, — ինչ ա-
րարած վոր յենթակա յե մահի սահմաններին —
ուզիր, յես կտամ քեզ: Միայն յերբեք չեմ կա-
րող հանձնել թշվառության մեջ ինձ ապաստա-
նածին:

— Դատավոր, — պատասխանեց անգղը, — քա-
նի վոր դու այդքան սիրում ես այդ աղափսուն,
— փոխարենը տուր քո մարմնից այնքան միս,
վորքան կշռում է աղափսին:

— Այո՛, հիմա արդար է և ճշմարիտ քո
կամքը, — սրտահոժար ասաց Ուշինարան, — սիրով
կըտամ, ո՞վ անգղ, իմ մարմնից փոխարենը:

* * *

Յե՛վ հանկարծ դահլիճի ձեղունից մի կշիռ
կախվեց:

Ուշինարան աղափսուն զրեց մի նժարում,
խսկ մյուս նժարում իր մարմնից մի փերթ.
բայց աղափսին դեռ ծանր եր կշռում: Նորից
կտրեց մսի մի փերթ, և աղափսին նորից ծանր
եք: Դարձյալ նորանոր փերթեր կտրեց զրեց, և
սակայն աղափսին ավելի և ավելի ծանր եր
կշռում:

Այն ժամանակ Ուշինարան ամբողջ իր հո-
շոտված մարմնով յելավ կանգնեց նժարի մեջ...

— Յես Ինդրան եմ, — ձայնեց անզղը, —
տիեզերքի իշխանը, և աղափսին — հուր Ազնիի
վոգին:

Մենք յեկանք քո առաքինությունը փորձե-
լու համար:

Հավիտենական փառքով դու զարդարեցիր
քեզ, ո՞վ Ուշինարա, վորովհետև քո իսկ մարմ-
նով խղճացիր փոքրիկ աղափսուն և քո կյանքով
փրկեցիր թշվառին:

Ժողովուրդների մեջ պիտի չհնանա քո ա-
նունը, և հավիտյան պիտի ապրիս դու անմահ
փառքով ու փալլով, վորովհետև պարտքի սըր-
բության հավատարիմ յեղար:

1926, Վենետիկ.

— «Մի անգամ իմ բարեկամ մի վորսորդ
մեր հանդի անտառուտ սարերից մի յեղնիկ նը-
վեր բերեց յերեսաներիս համար»:

Այսպես սկսեց ընկերս աշնանային մի յե-
քեկո, յերբ նստած միասին նրա պատշգամբում,
հիացած նայում էինք հեքիաթական վերջալույս-
սով վառվառուն սարերին, վորոնց վրա մակաղած
հոտերի նման մեղմորոք հանգչում էին վոսկե-
զեղմն անտառները:

— «Այդ մի մատաղ ու խարտյաշ յեղնիկ
եք, խորունկ, սև ու ջինջ աչքերով, վոր ծած-
կվում էին յերկայն, նուրբ թարթիչների տակ:

Յերբ բռնում էի նրան՝ քնքուշ մարմինը
կուչ եր գալիս գրկիս մեջ, և սիրտը վախից
թրթռում եր այնպես արագ, թիթեռի թևերի
նման:

Կամաց-կամաց մեր վրա սովորեց նա. ել
չեր փախչում, չեր վախենում մեզնից. մանա-
վանդ շատ մտերմացել եր յերեսաներիս հետ:

նրանց հետ միասին վազվզում եր պարտիզում,
նրանց հետ ճաշում եր, նրանց հետ քնում:

Մի բան ինձ շատ եր զարմացնում: Յեղ-
նիկը թեև աֆսոսալիս ընտելացել եր մեզ, սովորել
եր մեր տանն ու դռանը, բայց մեկ-մեկ մեզ-
նից թաքուն բարձրանում եր այս պատշգամբը
և ուշագրավ, լուկ նայում եր հեռու՝ անտառ-
ներով փաթաթված սարերին. ականջները լա-
րած՝ խորասույզ լսում եր անտառների խուլ և
անդուլ շառաչին, վոր յերբեմն ուժեղանում
եր, յերբեմն բարականում՝ նայելով հովե-
րի թափին: Նայում եր նա անապետ անթարթ
և անապետ ինքնամոռաց, վոր յերբ պատահում
եր բարձրանում եյի պատշգամբը, ինձ բավա-
կան միջոց չեր նկատում և յերբ հանկարծ ուշ-
քի եր գալիս՝ նետի պես ծլկվում եր մոտիցս...

Արդյոք գիտե՞ր նա, վոր ինքը այդ դողան-
ջուն անտառների ազատ յերեխան ե յեղիլ, վոր
իր մայրը այնտեղ ե կաթ տվել իրեն, վոր այն-
տեղ ե իր հայրը յեղջուրները խփել կաղնինե-
րին: Արդյոք գիտե՞ր, վոր այդ խուլ շառաչը ա-
նձու-անձու որորել ե իրեն առաջին անգամ, և
ո՞վ գիտե, գուցե յերագներ ե բերել իրեն, սի-
րուն յերագներ...

Խեղճ յեղնիկ... Կարոտ՝ իր սիրած գուր-
գուրող անտառներից և զանգակ աղբյուրներից,

իր խարտյաշ մորից և շնկշնկան հովերի հետ
վաղող ընկերներից՝ հիմա տանջվում, տառա-
պում ե մեզ մոտ, մտածում եյի յես: Յեվ այն-
պես սրտանց ցավակցում եյի նրան... Չե՞ վոր
նա յել մեզ պես մտածող և զգայուն հոգի
ունի...

Յես շատ եյի հարգում նրան, խնդրեմ չը
ծիծաղես վրաս, այո, այնքան, վոր յերբ նա
բարձրանում եր պատշգամբը, հեռացնում եյի
յերեխաներիս, և թողնում եյինք նրան մենակ
իր ապրումների հետ...

Յերբ գրկում եյի նրան, այդ նազելի եա-
կին և նայում եյի լեռնային աղբյուրների նը-
ման վճիտ աչուկների մեջ՝ տեսնում եյի այն-
տեղ մի թախծալի, յերագուն կարոտ...

Մի գիշեր, — մի քամի գիշեր եր, — սարերից
անսանձ փչում եր քամին, դուռն ու պատու-
հանները ծեծում ու ծեծկում: Պարզ լսվում եր,
վոր այնտեղ, անտառում, դարևոր կաղնիներն
ու վայրի ընկուզենիները ճակատում եյին հող-
մի դեմ՝ աղմկում և գոռում: Յեվ քամին բե-
քում եր անընդհատ անտառի այդ լիակուրծք
խշուցն ու մոռնչը, ու թվում եր թե՛ հենց մեր
դռան առջևն ե աղմկահույզ, հողմածեծ ան-
տառ:

Յերեխաներս վախից կուչ եյին յեկել:

մինչդեռ յեղնիկը դողում եր մի խենթ սարսու-
ռով: Աչքերը կայծակին եյին տալիս: Անթարթ,
ամբողջովին լսելիք դառած՝ ականջ եր դնում
նա անտառի հուժկու շառաչին, վոր խոսում եր
նրա հետ մայրենի լեզվով:

— «Անտառը կանչում ե նրան, ընկերների
ազատ վազքն ե տեսնում նա մթին թավուտնե-
րի մացառուտ ժայռերն ի վեր», մտածում եյի
յես:

Մի փոքր հետո ավելի սաստկացավ քամին՝
փոթորիկ դառնալու չափ. մեկ ել ազմուկով
բացվեցին լուսամուտի փեղկերը, և մի ուժգին
շառաչ միանգամից ներս խուժեց: Յեղնիկը
հանկարծակի մի վոստումով ցատկեց լուսամուտի
գոգը՝ աչքերը սուղելով շառաչուն խավարի մեջ:
Յես իսկույն վրա վազեցի բռնելու նրան, սա-
կայն նա մի ակնթարթի մեջ թռավ լուսամու-
տից սլարտեզը և ծածկվեց խավարների մեջ...

Դեհ, հիմա գնա ու գտիր նրան իր հայրե-
նի անծայր անտառներում...

1907, Դսեղ.

ԻՆՉՈՒՄՆ Ե ՍՓՈՓԱՆՔԸ

Յեղավ վոր՝ մի այրի կնոջ մի հատիկ վոր-
դին մեռավ՝ թողնելով վողջ ընտանիքը մեծ սգի
և ծայր-աղքատության մեջ:

Վշտահար մայրը սևեր հագավ, գնաց՝ նըս-
տավ վորդու թարմ գերեզմանի սնարքին, լա-
ցեց. անմխիթար ու արյուն-արցունքով:

Առավոտից մինչև յերեկո, յերեկոյից մին-
չև ուշ-գիշեր, անոթի-ծարավ նստել եր նա ծա-
նըր վշտի տակ փշուր-փշուր յեղած: Միայն
յերբեմն-յերբեմն վեր եր կենում անթեղը նո-
րոգելու, վորից բարակ ծուխը վոլոր-վոլոր,
հյուսվելով նրա հեծեծանքների հետ՝ բարձրա-
նում եր վեր, ցրվում եր գյուղի վրա և մըտ-
նում ամեն մի խրճիթ...

— Խեղճ կին, — ասում եյին գյուղացիները
էրար, — ինչ կսկիծի հանդիպեց:

* * *

Յեվ հավաքվեցին գյուղի փորձված ծերու-
նիները, յեկան գերեզմանատուն վշտաբեկ մոր
մոտ և ասացին նրան.

— Հերիք ե լաս, այ խեղճ կին, լացով կո-
րուստդ հետ չի դառնա: Աշխարքիս որենքն ե—
ծնվել ենք, պիտի մեռնենք: Ով վողջ մնա, թող
նա պարծենա: Մենք մահինն ենք, մահը՝ մերը-
պետք ե հաշտվենք աշխարքիս կամքին:

— Տուն դարձիր, վորք թոռնուկներդ քո ձեռ-
քին են նայում: Գնա՛, խնամիր նրանց, պարտքդ
կատարիր: Թող հանգիստ քնի հանգուցյալը, և
յերանի նրան, վոր շուտ ազատվեց այս դառն
աշխարհից...

Այսպիսի խոսքեր ասացին փորձված ծերու-
նիները սառն ու կնճռոտ ճակատներով, բայց
սգավոր մայրը գլուխը չբարձրացրեց, և ավելի
դառն ու անսփոփ լացեց...

* * *

Յե՛վ հավաքվեցին գյուղի հարուստները,
յեկան սրտաբեկ մոր մոտ և ասացին նրան.

— Հերիք ե լաս, այ խեղճ կին: Մեռնողը
մեռնում ե, ապրողը պիտի ապրի. վորքուկներդ
ապրել են ուզում: Տուն դարձիր, վառիր ոճա-
խըդ, հավաքիր շուրջդ թոռնիկներդ, պահիր,
մեծացրու, հոր տեղը կբռնեն ժամանակով:

Մենք ել քո դուռն ու դրացին ենք, ոտաբ
չենք. կոգնենք, կհասնենք քեզ... Մխիթարվի՛ր,
տուն դարձիր:

Բայց սգավոր մայրը չլսեց նրանց, գլուխը
չբարձրացրեց, և նորից ավելի անհույս ու սրբ-
տամորմոք՝ լալիս եր ու լալիս:

* * *

Այդ միջոցին մի ճամբորդ եր անցնում
գյուղի միջով: Լսեց այս սրտաքամ լացը, սիրտը
լցվեց վշտով, և հարցումով մոտեցավ գյուղա-
ցիներին, վոր հավաքվել էին թշվառ մոր շուրջը:

Ապա անցորդը խոնարհվեց գետին, համ-
բուրելով հուսահատ կնոջ ձեռները՝ սրտագին
լաց յեղավ:

Այդ ժամանակ վորդեկորույս մայրը գլու-
խը վեր բարձրացրեց, սրբեց արյունավառ աչ-
քերը, և նրան այնպես յեկավ, վորպես թե մե-
կը կիսեց իր ուսերը փշոփ ծանր բեռը: Յե՛վ
սփոփանքի մի շող փայլեց նրա սև ճակատին:

Վոտքի յեկավ և հուսադրված քայլեց դեպի
իր հանգած ոճախը:

1908, Ալեքսանդրապոլ.

Սուլթան Մեհմեդ կեսորից հետո նստել եք Սերայի մեծ դահլիճում, գահի վրա, վեհափառ սարքը գլխին:

Չախ ափի մեջ բռնել եր մորուքը և ցուցամառը դրել եր բարակ, յերկարուն, սուր քթի վրա: Խորագնին հայացքով նայում եր իշ վոտների ներքև, Սպահանի թանգարժեք գորգերի վրա ծունր դրած մեծ վեզիրին, սերասքյարին, դեֆտերտարին և Մյունեճիմ-բաշուն:

Մեծ վեզիր Մահմուդ փաշայի խորագետ հայացքը կարգում եր Սուլթանի դեմքը, վոր միշտ անթափանցելի կերպով ծածկում եր նրա հոգեկան կացութունը: Սուլթանը հոգում հուզված եր վեզիրի հաղորդած լուրերի պատճառով:

— «Փուլթ չե, մտածում եր Սուլթանը, յես կարող եմ, յեթե ուզենամ, գյավուր վենեաիկցիներին հանել խոզ ճենովացիների դեմ սակայն հիմա բարեկամ պիտի յերևալ, վորպեսզի հետո, հարմար ժամանակին լավ հարվածեք

նրանց: Այսպես»:— Յեվ դիմեց պետական գանձապետին:

— Դու, դեֆտերտար, ամենաընտիր նվերներ ուղարկիր շուտով, իմ անունից, վենետիկի և Ճենովայի իշխանապետներին, իբրև նշան բարեկամության:

Դեֆտերտարը խորին գլուխ տվեց մինչև գետին:

— Դու, սադրագամ,— հարցրեց սուլթանը մեծ վեզիրին,— ուրիշ ինչ լուրեր ունիս:

— Բոյսուկ Սուլթան, մաճառ Հունիադին Բելգրադի մեջ ահագին թվով ասքյար ե հավաքել, իսկ առնավուտների Իսկենդեր-բեգը հարձակվել ե քո պետության սահմանների վրա, և քո հավատարիմ ծառաներից շատերին չարաչար սպանել, շատերին ել գերի վարել...— Պատասխանեց վեզիրը վախվխելով:

Սուլթանի յերեսի վրա վոչ մի մկան չը շարժվեց:

— Աշխարհասասան մեծ փադիշահ, Իսլամի վահան, քո քաջ բանակները վրեժի կրակով բռնկված՝ քո մեկ հրամանին են սպասում կովի դաշտ թռչելու՝ մեռցնելու և մեռնելու քո փառքի համար...— Սիրս առած բերան բացեց գինվորական նախարարը՝ սերասքյարը:

Սուլթանի դեմքի վրա նորից վոչ մի մը-
կան չըշարժվեց:

— Ալլահի սիրելի, ճակատագրի ընտրյալ,
հավիտյանս Տաթիհ Սուլթան,—կարճատև լու-
թյունը խզեց պալատական ասադագետ՝ Մյունե-
ճիմ-բաշին,—յերկնքի աստղերը քո ձեռնարկի
համար շատ բարբառստ յեղք են գուշակում:
Փամանակն ե անհաղթ սուրդ մերկացնելու:

Մեծ վեզիրը, սեր-ասքյարը, Մյունեճիմ-բա-
շին խոսք մեկ եյին արած Սուլթանին համո-
զելու, վոր գյավուրների դեմ պատերազմ հըռ-
չակե:

Սուլթանը մի կարճ հայացք նետեց վեզի-
րի վրա: Սա վայրկյանը հարմար համարեց նո-
րից խոսելու:

— Ի՞նչ ե մտածում մեր հոգու և մեր
մարմնի Տերը, Կրալների, Շահին Շահերի, Սուլ-
թանների Սուլթանը: Ի՞նչ ե մտածում քո իմաս-
տուն հանճարը պատերազմ հայտարարելու մա-
սին, դո՛ւ, նոր ժամանակների մեծ Սողոմոն
արքա...

— Յես... Յես ի՞նչ եմ մտածում—այդ
միմիայն յես գիտեմ: Յեթե սեփական մորու-
քիս մազն անգամ գիտենա իմ մտքերը, արմա-
տից կպոկեմ այն...—Տիրաբար ասաց Սուլթանը
և լռեց:

Լռեց և վեզիրը՝ տեսնելով, վոր այլևս ան-
հնար ե Սուլթանի դիտավորությունը իմանալ՝
թե արդյոք ուզո՞ւմ ե պատերազմ թե վոչ: Նա
գիտեր, վոր Սուլթանի գաղտնապահությունը
անսահման ե, հիշելով, վոր Սուլթանը մի ան-
գամ ասաց թե՛ հաջողության հոգին գաղտնիք
պահելն ե և մի վճիռ լավ խորհելուց հետո
կայծակի պես արագ գործ դնելը:

Սակայն սեր-ասքյարը փորձ արեց գրգռել
նրա գայրույթը:

— Մեծ Լագի փառիշահ, դո՛ւ՝ վոր մինչև
այժմ տասը թագավորության ես տիրել և հար-
յուրյոթանասուն քաղաք գրավել՝ հիմա հանդըգ-
նում ե վոյեռդ Դրակուլը, այդ գյավուր վլախը,
աններելի, անհանդուրժելի լրբություն գործել
քո հավատարիմ ծառաների դեմ: Քո ուղարկած
պատգամավորներին, վորոնք մեր սրբազան ո-
քենքի համաձայն չեն հանել նրա առաջ իրենց
սարըքները՝ պահանջել ե գլուխները բանան,
խսկ յերբ մերոնք մերժել են, այդ ժամանակ
այդ շունը ասել ե. —Լավ, թո՛ղ այդպես լինի,
հրամայելով դահիճներին, վոր բևեռեն սարըք-
ները մերոնց գլուխների վրա: Յեվ դահիճները
ահագին գամեր են խփել ծառաներիդ գանկերի
մեջ և այդպիսով սոսկալի տանջանքների մեջ
նահատակել մերոնց...

— Անհանդուրժելի՛ր յե այս, անհանդուր-
ժելի՛ր, — միաբերան վրա բերին վեզիրն ու զեֆ-
զերտարը:

Սուլթանը այս սարսափելի դեպքի վրա
բարձր և ուրախ ծիծաղեց և նորից ծիծաղեց:
Նրան շատ զվարճալի և սրամիտ թվաց Դրակուլի
այս յեղեոնական արարքը: Այլ ծիծաղից հան-
գատանալով ասաց սենեկապետին, վոր իր առջե-
բերեն մյուս սենյակում սպասող բանաստեղծ-
ներին և Ջենտիլ Բելլինին, վենետիկցի այս
նշանավոր նկարչին, վոր վաղուց հետե Պոլսուհի
եր ապրում Սուլթանի հրավերի համաձայն՝ նը-
կարելու համար թե գեղարվեստասեր փաղիշա-
հին և թե այլ պատկերներ:

Ներս մտան և խոնարհ գլուխ տալով՝ ծնկի
յեկան բանաստեղծ-փիլիսոփա Սինանը, վոր
Սուլթանի գրադարանապետն էր, բանաստեղծ
Համզին, և բանաստեղծ Շեհզին, վոր չորս հա-
զար վոտանավոր տունի մեջ յերգել էր Փաթի-
հի հաղթանակները ու փառահեղ գործերը: Նրանց
հետ եր և նկարիչ Բելլինին:

Սուլթանը սիրալիք վողջունեց նրանց: Նա
իր արքայական հովանավորութունը տարածում
էր բանաստեղծների և փիլիսոփաների վրա. և
սիրում էր նրանց հետ խոսել բարձրագույն նյու-

թերի մասին: Ինքը ևս գրում էր պարսկերեն
լեզվով գազելներ՝ Աֆսի կեղծ անունով:

Սուլթանը գահի բարձի տակից հանեց մի
գիրք, վոր զարդարված էր պարսկական մանրա-
նկարներով:

— Համզի, — ասաց նա, — կարդացի իմ սիրե-
լի Ջամիի «Յուսուֆ և Զուլեյխան»: Շատ գեղե-
ցիկ գործ է: Ուզում եմ, վոր այն ևս թարգմա-
նես մեր ժողովրդի համար, և այնպես կատար-
յալ, ինչպես թարգմանեցիր Նիզամիի «Լեյլա-
Մեջնումը»:

Համզին անսահման ուրախությամբ ճակա-
տը հպեց գորգին իր հոժարությունը հայտնե-
լով:

— Դու, — զեֆզերտար, ուղարկեցիր Քերաթ
սիրելի Ջամին իմ տարեկան նվեր վոսկին:

Դեֆտերտարը մինչև գիտին գլուխ տվեց:

— Սինան, — զիմեց Սուլթանը նրան, — սի-
րում ես Ջամին:

— Ասովածընտիք փաղիշահ, քո սիրած
բանաստեղծին ինչպես կարելի յե, վոր յես չը-
սիրեմ: Նա պարսիկների յոթը մեծերից մեկն է:

— Այո. բայց յես ամենից շատ հիացած
եմ Զելալեզզին. Ռյումիով: Նրա իմաստու-
թյունը անհուն է: Ուռուհիների Ապլատուն փի-
լիսոփան նրա չափ խորագետ չէ:

— Իբրով եք, մեծ փառիշտան, իսկական աստվածայինը Ձեզլալեդպին Ռյուսմին ե, քան թե Ապլատունը: Ձեզնր Ռյուսմի իմաստության համաձայն մարդկային գոյության, նրա հոգու նպատակն ե, վոր վերջը լուծվի իր նախադրյուրի մեջ—աստծու մեջ ու այն ծովի մեջ, վորից յերբեմն դուրս ե հոսել, վոր ապա, հետևողական աստիճաններով դառնա հող, բույս, անասուն, մարդ, ապա հրեշտակ և վերջը աստծուն հասնի:

— Դու, Շեհդի,— Սուլթանը դարձավ Շեհդիին,— յերեկ ստացա Ձեյներ խանուսի դիվանը, վոր ինձ ե նվիրել: Սիրուն գազելներ կան, քայց յես ավելի սիրում եմ Միհրի խանուսի գազելները: Ի՞նչպիսի քարցրությամբ գովում ե նա իր սիրածին, նրա գեղեցկությունը աստվածության ե հասցնում: Դեֆտերտար, վաղը իմ անունից նվերներ ուղարկիր շեյիք խանուսներին, Դեհլիի, Բաղդատի դիպակներ, մյուսլիներ ու սավայիներ, ինչ վոր հաճելի յե կանանց:

— Շատ ճշմարիտ ե նկատել աշխարհի աչքը՝ արև-Սուլթանը,— ասաց Շեհդիին,— յերբ կարդում ես Միհրի խանուսի գազելները, թվում ե թե նեղիմի դերվիշն ե յերգողը, վոր պաշտում եր գեղեցիկը. և իր սիրածի մեջ աստվածությունն եր անձնավորված տեսնում:

— Միթե... վաղը թող Սինանը ինձ բերի նեղիմի դիվանը, իսկ այսոր քեզ կտամ մի քանի գազելներ, վոր նոր եմ գրել: Մյուս որը կըխոսենք դրանց մասին:

Ապա հայացքը ուղղելով վենետիկցի նկարչին ասաց.

— Ի՞նչ նոր բան ունես նկարած, իմ սիրելիս...

Հռչակավոր վարպետը ցույց տվեց մի պատան, վորի վրա նկարած ուներ Հովհաննես Մրկրտչի կտրած գլուխը: Սուլթանը հիացած՝ գովեց նկարի գույների ներդաշնակությունը, ապա հարևանցի ասաց.

— Սակայն պարանոցի այս կտոր միսը, վոր դեռ նկատվում ե կտրած գլխի վրա, իրականին չի համապատասխանում:

Նկարիչը զարմացած նայում եր Սուլթանին:

— Այո,— շարունակեց Սուլթանը,— յերբ մեկը գլխատվում ե, պարանոցը իսկույն վռնչանում ե, վորովհետև նրա մկանները մորթու, ջղերի և յերակների հետ անմիջապես քաշվում, կծկվում են գլխի և իրանի մեջ:

Յեվ նկատելով նկարչի կասկածանքը՝ հրամայեց պալատական զինավառ դռնապան պահակին, վոր մի ստրուկ բերե, Ստրուկին դահ-

լիճ բերին: Սուլթանի ակնարկի վրա՝ պահակը
 սրի մի հարվածով թոցրեց ստրուկի գլուխը՝
 ներկաների սարսափած աչքերի առաջ: Հետո
 սուլթանը հրավիրեց նկարչի ուշադրութունը
 կտրած գլխի վրա.

— Ճշմարիտ չե՞ ասածս, սիրելի Բելլինի:

— Այո՛, իսկ և իսկ, իմաստուն արքա:

Մինչ այդ՝ Սերայի մինարեյից հնչեց մյու-
 եզինի յերեկոյան աղոթքը: Սուլթանը վեր կա-
 ցավ, քայլերն ուղղեց դեպի Սերայի մյուս հար-
 կաբաժինները՝ ապրեստի և նամազի համար:

Սուլթանի աչքին՝ սողալով յերևաց զզլար-
 աղասին, մեծ ներքինապետը: Սուլթանը խոր-
 հըրդավոր ձայնով շնչաց նրան և ներքինապե-
 տը աչքերին քսեց Սուլթանի ջյուպպայի բղանց-
 քը գոհունակ ժպիտով և հեռ-հեռ քաշվեց:

Բոլոր ներկաները սավերների պես իրար
 հետեից յերերուն քայլերով՝ դուրս յելան իմաս-
 տության և վոճիրի դահլիճից...

1921, Վենետիկ.



„Հ Ե Ր Մ Ե Ս“

Հրատարակչությունն հրատարակություններ

Գ Ե Ղ Ա Ր Վ Ե Ս Տ Ա Կ Ա Ն

- 1. ՍՏ. ԶՈՐՅԱՆ.—Քրտադարանի Աղջեկը 50 կ.
- 2. » » Հեղկոսի նախագահը 40 »
- 3. ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ.—Ժամանակակից Մելոդրամ 60 »
- 4. » » Քորձադուլ, պիես 25 »
- 5. » » Մի գլխարկի պատմություն 40 »
- 6. Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ.—Մանթինի, ժողովածու 40 »
- 7. Վ. ԹՈԹՈՎԵՆՅ.—Աստուր և Կլեոպատրա 30 »
- 8. ԱՎ. ԻՂԱԶՆԿՅԱՆ.—Արու-լալա Մահարի կազմած 1 ր 80 »
- 9. » » Համբերանքի շիբուլը 40 »

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն

- 10. ՍՏ. ԶՈՐՅԱՆ.—Էկերտական Լամպը (պատկերագր.) 35 »
- 11. ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՅ (Փոխադրութ.)—Քիբորի լերագը, գունատիպ 75 »
- 12. ՄԻՔ ԶԱՐԱՅՅԱՆ.—Մորեխը, բնագիտական գրույց (պատկերագրագր) 40 »

Ո Ւ Ս ՈՒ Մ Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

- 13. ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ.—Արտն թոխմախան 50 »
- 14. ТАД АВДАЛБЕГЯН.—Золото в схемах простого воспроизводства (очерк по теории воспроизводства) 1 р.
- 15. Г. В. БЕБУТОВ.—Л. Н. Толстой и Хаджи-Мурат 50 к.
- 16. ԱՄՈՒՍԻՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ և ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՐԵՆՔԸ (ՀՍԽ՝ Արդժողկոմատի մատչելի պարզարան ությամբ) 70 »

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.



ԱՎ. ԻՏԱԿՅԱՆ

Տրւբկա տըրքենիյա

ԿնիգօիշտաթէլՅտւօ «Դըրմէս»
Յրիւանօ, յւլ. Մարկսա, 29.

10 293

2073

